

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ
ԹԵՍՏԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2024թ. «Մաթեմատիկա» առարկան դասավանդող ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման թեստերի կառուցվածքը, տարբեր կառուցվածք ունեցող առաջադրանքների նմուշ օրինակներ, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվել «Մաթեմատիկա» առարկայի հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերը:

1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Մաթեմատիկա» առարկայի *ուսուցիչների ատեստավորման* թեստը գնահատվում է 60 միավոր, որից 30 միավորն ընտրովի պատասխանով առաջադրանքներին է բաժին ընկնում, իսկ 30 միավորը՝ կարճ պատասխանով առաջադրանքներին:

Թեստում 1-30-րդ առաջադրանքներն ընտրովի պատասխանով են, 31-60-րդը՝ կարճ պատասխանով և ընդգրկում են մաթեմատիկայի առարկայական ծրագրի բոլոր թեմաները:

Ուսուցիչների ատեստավորման թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե և թեստավորումը անցկացվում է համակարգչային եղանակով:

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ , ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ:

Ա. *Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:*

Անհրաժեշտ է նշել ճիշտ պատասխանը համապատասխան վանդակում:

Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

II. Կարճ պատասխանով առաջադրանքներ:

Կարճ պատասխանով առաջադրանքների պատասխանները ոչ բացասական ամբողջ թվեր են:

Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է պատասխանի համար նախատեսված դաշտում մուտքագրել ճիշտ պատասխանին համապատասխանող թիվը:

3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Մաթեմատիկա» առարկայի ուսուցչի ատեստավորման թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Մաթեմատիկա» առարկայի ուսումնական ծրագրերի:

Թեստում ընդգրկված են դպրոցական ծրագրի բոլոր թեմաները:

4. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական սենյակում թույլատրվում է ունենալ՝

- պարզագույն հաշվիչ